

որով Տաթեւացւոյն ծանօթ է «տեառնականն զատկի եւ տէրունական տօնից» (Հրց. 362): Կային եւ հաւատացեալք, որ առանձին պաշտօնասիրութեամբ մ'այս կամ այն սրբոյն, անոնց յիշատակին կը թողուին իրենք տեառնականը, այսպէս Ատոմ նահատակն ուխտած էր՝ Ս. Գէորգայ տօնին օրը նոխազ մը պատարագ մատուցանել (ՅՏ. ԿԹՂ. 157):

4. — Վայրը: — Յայտնի տեսանք՝ որ տեառնականը շատ աւելի կրօնական կնիք ունէր քան պարզ ազապները. ասոր համար կը կատարուէր սրբազան վայրերու մէջ, եւ առաւելապէս մենաստանաց, գէթ հին ժամանակ: Ս. Սահակայ կանոնք թրւելով բոլոր տեառնականները, կ'ըսեն՝ թէ որովհետեւ «ուխտք են՝ ի վաճա կատարեսցին», որպէս զի անոնց բնակիչները, որ «ուխտաւորեալ են», շնորհիւ ուխտին կերակրուին (111):

Բայց կը զենուին նաեւ ուրիշ ականաւոր ուխտավայրից մէջ՝ որ վանք չէին, կամ հարկ չկար որ լինէին. այսպէս տեսանք վերեւ՝ որ Վահանեանք իրենց ուխտականքը կը նուիրէին Վաղարշապատու կաթողիկէին մէջ, «ի տան Աստուծոյ եւ ի վկայարանս նահատակեալ կուսանացն» (Փրպ. 430, '79): — Իսկ ըստ երիցա-